



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



ՄԵԴԻԱ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

2018Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Այս զեկույցը պատրաստել է Երևանի մամուլի ակումբը «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացնում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ: Զեկույցի բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

www.ypc.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| 2018թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ | 5 |
| ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՍԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Զոքրոքոյ փուլ, 2018թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-15) | 6 |
| ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Երրորդ փուլ, 2018թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7) | 10 |
| ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Երկրորդ փուլ, 2018թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-25) | 14 |
| ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Առաջին փուլ, 2018թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16 - ՆՈՅԵՄԲԵՐԻ 1) | 18 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ | 21 |
| ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ | 23 |
| ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ | 35 |
| ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ (Զոքրոքոյ փուլ, 2018թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-15) | 39 |
| ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԶՈՒԹՅՈՒՆ (Երրորդ փուլ, 2018թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7) | 49 |

| | |
|---|----|
| ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ (Երկրորդ փուլ, 2018թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-25) | 59 |
| ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ (Առաջին փուլ, 2018թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16 - ՆՈՅԵՄԲԵՐԻ 1) | 69 |

2018թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2018թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցել են 9 կուսակցություն և 2 դաշինք:

2018թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարեց համապետական ընտրական ցուցակներով ՀՀ ԱԺ ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքները: Կուսակցությունների/դաշինքների ստացած ձայները բաշխվել են հետևյալ կերպ (*տոկոսներով*).

| | Կուսակցություն/դաշինք | % |
|-----|--|-------|
| 1. | «Իմ քայլը» կուսակցությունների դաշինք | 70.42 |
| 2. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 8.26 |
| 3. | «Լուսավոր Հայաստան» կուսակցություն | 6.37 |
| 4. | Հայաստանի Հանրապետական կուսակցություն | 4.70 |
| 5. | Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցություն | 3.88 |
| 6. | «Մենք» կուսակցությունների դաշինք | 2 |
| 7. | «Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն | 1.82 |
| 8. | «Օրինաց երկիր» կուսակցություն | 0.99 |
| 9. | «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն | 0.68 |
| 10. | «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն | 0.51 |
| 11. | «Ազգային առաջընթաց» կուսակցություն | 0.33 |

Այսպիսով, ՀՀ Ազգային ժողով անցել են մեկ դաշինք և երկու կուսակցություն, որոնք հաղթահարել են համապատասխանաբար 7 և 5 տոկոսի շեմերը: 132 պատգամավորական մանդատները բաշխվել են հետևյալ կերպ.

- «Իմ քայլը» կուսակցությունների դաշինք՝ 88 մանդատ,
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 26 մանդատ,
- «Լուսավոր Հայաստան» կուսակցություն՝ 18 մանդատ:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Չորրորդ փուլ. 2018թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9 [20.00-ից մինչև 02.00-ն],
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-15)

ՆԵՐԿԱ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԲՈԼՈՐ ՓՈԽԼԵՐՈՒՄ հետազոտության առարկա են դարձել համազգային վեց վերգետնյա հեռուստաալիքների՝ Հայաստանի Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2) և «Շանթ», լրատվական և քաղաքական ուղղվածության հիմնական հաղորդումները, ինչպես նաև պարբերաբար ռեյտինգային բարձր տեղեր զբաղեցնող երկու առցանց լրատվամիջոց՝ 1in.am և News.am: Ընդ որում, հետազոտվել են News.am-ի բոլոր նյութերը, իսկ 1in.am-ի՝ պրայմ-թայմի բանավիճային քաղաքական տեսահաղորդումները (*այստեղ և այսուհետև՝ մշտադիտարկման մեթոդաբանությունը տե՛ս՝ «Ընդհանուր տեղեկություններ մշտադիտարկման մասին» բաժնում, մշտադիտարկման քանակական արդյունքները՝ «Աղյուսակներ» բաժնում*):

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ առավել ակտիվորեն է եղել 2018թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ ընտրությունների քվեարկության ավարտից հետո երեկոյան և գիշերը: Եվ եթե 2018թ. դեկտեմբերի 10-ի գիշերը և վաղ առավոտյան ԶԼՄ-ները կենտրոնացած էին ձայների հաշվարկի մասին թարմացվող տեղեկատվության վրա, ապա մինչև գիշերվա 2-ն ընկած ժամանակահատվածը, որը ենթարկվել է մշտադիտարկման, ուշադրության են արժանացել նաև ողջ ընտրական գործընթացին տրվող գնահատականները: Հենց այս ժամանակահատվածում մշտադիտարկման թեմային անդրադարձները առավել ինտենսիվ բնույթ են կրել: Այդ 6 ժամվա ընթացքում 2018թ. դեկտեմբերի 9-ից 10-ի գիշերը (20.00-02.00) մշտադիտարկման խումբը հետազոտված վեց հեռուստաալիքների եթերում արձանագրել է 333 անդրադարձ թեմային՝ հետընտրական մշտադիտարկման ողջ ընթացքում արձանագրված 583 անդրադարձներից, ինչը կազմել է 57.1%: Ընտրություններին հետևած առաջին ժամերին արդյունքների լուսաբանման ինտենսիվությունն ընդգծվում էր նաև նշանային բնութագրիչներով անդրադարձների թվով՝ 145 դրականից 59 (40.7%) և 59 բացասականից 48 (81.4%) անդրադարձ բաժին է ընկել հետազոտված ողջ հետընտրական ժամանակահատվածի հենց այս վեց ժամին, որոնք անմիջապես հետևել են ընտրական տեղամասերի փակմանը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱՍԿԱՆՆԵՐԸ արմատապես տարբերվում են իրենց բովանդակությամբ: Հաղթած քաղաքական ուժի, խորհրդարան անցած կամ չանցած, կամ ընտրություններին ընդհանրապես չմասնակցած մի շարք քաղաքական կուսակցությունների, ՀՀ պաշտոնական կառույցների՝ ներառյալ ընտրական հանձնաժողովները, միջազգային կազմակերպությունների, դիտորդական առաքելությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության

ներկայացուցիչներն ընտրությունները բնութագրեցին աննախադեպ ժողովրդավարական և բարձր ստանդարտներին համապատասխան: Ընդգծվում էր, որ չնայած դիտորդների արձանագրած առանձին թերություններին, Հայաստանի քաղաքացիները ազատ կամարտահայտման հնարավորություն են ունեցել: Որոշ ընդդիմադիր քաղաքական գործիչներ, ինչպես նաև որոշ փորձագետներ, կիսելով հանդերձ վերոնշյալ դատողությունները, միաժամանակ նշում էին, որ քարոզարշավին ընդհանուր առմամբ բնորոշ էին չափազանց ագրեսիվությունը, վառ արտահայտված անհանդուրժողականության և նույնիսկ թշնամանքի դրսևորումները, ինչպես նաև այն, որ չկար գաղափարական պայքար, քաղաքական ծրագրերի մրցակցություն, իսկ ընտրողների մասնակցությունը ցածր էր: Միայն մինչև «թավշյա հեղափոխությունը» կառավարող Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչները և կողմնակիցներն էին ընտրությունների մասին բացառապես բացասական արտահայտվում, խոսելով, մասնավորապես, «իշխող վախի մթնոլորտի», «Իմ քայլը» դաշինքի հակառակորդների վրա եղած ճնշումների, վարչական ռեսուրսի լայնորեն օգտագործման մասին:

Քվեարկությանը հետևած օրերին բավական մեծ ուշադրություն է հատկացվել օտարերկրյա պետությունների ղեկավարների և քաղաքական, հասարակական հեղինակավոր գործիչների, Սփյուռքի գանազան շրջանակների, միջազգային կազմակերպությունների շնորհավորանքներին, ինչպես ընտրությունների ընդհանուր, այնպես էլ առանձին կուսակցությունների և դաշինքների արդյունքների վերլուծությանը:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԲՈՒՈՐ ՀԵՌՈՒՍՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ, ինչպես նաև News.am պորտալի նյութերում, մշտադիտարկման առարկայի մասին առավել հաճախ արտահայտվել են պաշտոնական կառույցների ներկայացուցիչները: Վերջիններիս նկատմամբ հատուկ ընդգծված ուշադրություն (բոլոր անդրադարձների կեսից զգալիորեն ավելի) արձանագրվել է ընտրատեղամասերի փակումից անմիջապես հետո ընկած ժամերին: Ընդ որում, հեռուստաալիքների մշտադիտարկման ողջ ժամանակահատվածում, միայն «նյուսմեյքերների» այս կատեգորիայի, ինչպես նաև տեղական դիտորդների մոտ է արձանագրվել թեմային նշանային բնութագրիչներով անդրադարձների բացասական հաշվեկշիռ: Սա պայմանավորված է նրանով, որ պաշտոնական այնպիսի կառույցների ներկայացուցիչներ, ինչպիսին ընտրական հանձնաժողովներն են, իրավապահ մարմինները, օմբուդսմենի աշխատակազմը, հաճախ խոսում էին ընտրությունների ընթացքում իրենց կողմից արձանագրված կոնկրետ խախտումների մասին և ոչ թե ընտրություններին ընդհանուր գնահատական էին տալիս: Նույնը կարելի է ասել նաև տեղական դիտորդների մասին: Ընդհանուր առմամբ հետազոտված ՁԼՄ-ներում արտահայտությունների հաշվեկշիռը դրական է, իսկ հետընտրական շրջանում միջազգային կազմակերպությունների և դիտորդական առաքելությունների ներկայացուցիչների անդրադարձները թեմային առավել դրական են եղել: Այս կատեգորիայի մոտ դրական և չեզոք անդրադարձները մոտավորապես հավասար են եղել (համապատասխանաբար՝ 38 և 39), իսկ բացասականները ընդհանրապես չեն եղել: Մոտավորապես նույն պատկերն է առցանց ՁԼՄ-ներում:

Քվեարկության ավարտին հաջորդած առաջին ժամերին քաղաքացիների հարցումներին նվիրված այուժեններում վերաբերմունքը ընտրություններին բացառապես դրական է եղել:

Հետազոտված ՁԼՄ-ները քաղաքական ընդդիմությանը ակտիվ ամբիոն են տրամադրել:

Ընտրությունների մասին արտահայտությունների հաճախությամբ այս կատեգորիան երկրորդ տեղն է զբաղեցրել ինչպես մշտադիտարկման ենթարկված վեց հեռուստատալիքների հանրագումարային ցուցանիշով, այնպես էլ երկու առցանց ՁԼՄ-ներում: Ընդ որում, հեռուստատալիքների եթերում ընդդիմությունը հնարավորություն է ունեցել արտահայտվելու մոտավորապես երեք անգամ ավելի շատ, քան իշխող քաղաքական ուժը, իսկ News.am-ում նրա առավելությունը շատ ավելի զգալի է եղել: Այս ցուցանիշը վկայում է ՁԼՄ-ների ձգտման մասին՝ քաղաքական բազմակարծությունը ընդհանուր առմամբ պահպանել ոչ միայն նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում, երբ օրենսդրությունը հեռարձակող ՁԼՄ-ների համար համապատասխան կարգավորում է նախատեսում, այլ նաև դրանից դուրս: Մի փոքր այլ պատկեր է արձանագրվել քվեարկության ավարտից անմիջապես հետո, երբ իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչները ընդդիմությունից առավել հաճախ էին հայտնվում «Արմենիա» և «Շանթ» հեռուստատալիքների եթերում:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԲՈԼՈՐ ՎԵՑ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՁԼՄ-ներից միայն «Երկիր Մեդիայում» թեմային նշանային բնութագրիչներով անդրադարձների հանրագումարային հաշվեկշիռը մշտադիտարկման ողջ ժամանակահատվածում գրոյական է եղել, իսկ մնացած բոլորում՝ դրական: Տեղի ունեցած ընտրությունները բոլոր հեռարձակվողներից առավել դրական լուսաբանվել են Հ1-ում և «Կենտրոնի» եթերում: Հ2-ը բոլոր կատեգորիայի «նյութայիններից» եթեր տրամադրել է միայն պաշտոնական մարմինների ներկայացուցիչներին: Այս հեռարձակողի, ինչպես նաև «Արմենիայի», «Երկիր Մեդիայի» և News.am-ի մոտ, ընտրատեղամասերի փակումից հետո առաջին ժամերին թեմային նշանային բնութագրիչներով անդրադարձների հաշվեկշիռը բացասական է եղել:

Ինչպես և նախընտրական շրջանում, հանրային հեռարձակողը տարբերվել է նաև հետընտրական իրավիճակի ինտենսիվ լուսաբանմամբ: Սա ամրապնդել է երկրում քաղաքական գործընթացների նկատմամբ Առաջին ալիքի հետաքրքրության «վերածննդի» միտումը: 2012 թվականից սկսած՝ նախկին քարոզարշավների ժամանակ իրականացված ՁԼՄ-ների մշտադիտարկման արդյունքները արձանագրում էին մի շարք մասնավոր հեռարձակողների՝ առաջին հերթին «Երկիր Մեդիայի» և «Կենտրոնի» համեմատ Հ1-ի շատ ավելի նվազ ակտիվությունը: Իսկ հետընտրական գործընթացներին ամենաքիչ ուշադրությունը հատկացրել են «Արմենիան» և Հ2-ը:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԲՈԼՈՐ ՁԼՄ-ՆԵՐԻՑ, ներառյալ առցանց լրատվամիջոցները, ամենամեծ ակտիվությունը, ինչպես և մշտադիտարկման մյուս փուլերում, հանդես է բերել News.am-ը: Բացառություն է կազմել միայն մեկ առանձին ժամանակահատված՝ քվեարկության ավարտից հետո մի քանի ժամը, երբ հեռարձակվողներն ակտիվությամբ գերազանցեցին այս ՁԼՄ-ին: Ընդ որում, հետազոտված բոլոր ՁԼՄ-ներից միայն News.am-ում է, որ բացի պաշտոնական մարմիններից և տեղական դիտորդներից (ինչը հատուկ է եղել նաև հեռուստատալիքներին), բացասական հաշվեկշիռ արձանագրվել է ևս երկու կատեգորիայի «նյութային» մոտ. այստեղ ընտրությունների մասին ավելի հաճախ բացասական էին արտահայտվում նաև քաղաքական ընդդիմությունը և լրագրողները: Եվ եթե, ինչպես նշվում է վերևում, ընտրությունների ժամանակ արձանագրված թերությունների մասին հայտնող պաշտոնական մարմինների և տեղական դիտորդների դեպքում դա օրինաչափ է եղել, ապա այլ կատեգորիաների պարագայում կարելի է խոսել խմբագրական քաղաքականության որոշակի շեղման մասին:

Մեկ այլ հետազոտված առցանց ՁԼՄ՝ 1in.am-ը, նույնպես ինտենսիվ լուսաբանել է հետընտրական իրավիճակը, սակայն որպես մշտադիտարկման առարկա միայն բանավիճային ձևաչափի տեսանյութերի ընտրությունը պայմանավորել է ինչպես «համեստ» թվերը, այնպես էլ այլ սպեցիֆիկ ցուցանիշներ: Այսպես, 1in.am-ի հաղորդումներում առավել հաճախ հայտնվել են ոչ թե պաշտոնական մարմինների, ինչպես այլ հետազոտված ՁԼՄ-ներում է եղել, այլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և փորձագետները: Այս հաղորդումների բանավիճային-վերլուծական բնույթը կանխորոշել է ընտրությունների ընդհանուր բարձր գնահատականի գերակշռումը առանձին թերությունների հիշատակման նկատմամբ և, համապատասխանաբար, թեմային նշանային բնութագրիչներով անդրադարձների առավել տպավորիչ հարաբերակցությունը դրականների օգտին:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Երրորդ փուլ. 2018թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7)

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՓՈԻԼՆ ընդգրկել է նախընտրական քարոզչության բոլոր տասներկու օրերը: Մշտադիտարկման այս փուլը նվիրված է եղել ընտրությունների մասնակցող քաղաքական ուժերի նկատմամբ ԶԼՄ-ների ուշադրության և վերաբերմունքի վերհանմանը: Ընդ որում, հեռուստաընկերությունների դեպքում արձանագրվել են ինչպես հաղորդումներում վերջիններիս նկատմամբ անդրադարձների հաճախությունը, այնպես էլ՝ նրանց հատկացված եթերաժամանակի ծավալը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՅԻՆ ԱՌԱՎԵԼ ԻՆՏԵՆՍԻՎՈՐԵՆ, ինչպես նաև առաջին և երկրորդ փուլերում (2018թ. 16 հոկտեմբերի - 1 նոյեմբերի և 2018թ. նոյեմբերի 9-25), հետազոտված հեռարձակողներից անդրադարձել է Հ1-ը: Այս փաստն ուշադրություն է գրավում հատկապես այն պատճառով, որ նախորդ համապետական քարոզարշավների ժամանակ Հայաստանի Հանրային հեռուստատեսությունը մի շարք մասնավոր հեռարձակողների էականորեն զիջել է ընտրական գործընթացների լուսաբանման ակտիվությամբ:

Մշտադիտարկման թեմատիկային անդրադարձների ամենացածր ինտենսիվությունը գրանցվել է «Արմենիայի» եթերում, որը մնացած բոլոր հետազոտված հեռուստաալիքներից էականորեն հետ է մնացել: Մասնավոր հեռարձակողներից ամենամեծ ակտիվությունը ցուցաբերել է «Կենտրոնը»: Հետազոտված երկու առցանց լրատվամիջոցներից մշտադիտարկման թեմատիկայի լուսաբանման ինտենսիվության առավել բարձր ցուցանիշը՝ News.am-ի և համեմատաբար ցածր ցուցանիշը՝ 1in.am-ի պարագաներում պայմանավորված է եղել ոչ թե ընտրությունների թեմայի նկատմամբ հետաքրքրության տարբերությամբ, այլ հետազոտված լուսաբանման առանձնահատկություններով՝ առաջինում՝ բացառապես լրատվական ձևաչափը և երկրորդում՝ բանավիճային ձևաչափը:

ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔՆԵՐԻ ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆԸ մրցակցող քաղաքական ուժերից արժանացել է «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքը, որն առաջատարն էր և՛ անդրադարձների հաճախությամբ, և՛ իրեն հատկացված եթերաժամանակի ծավալով: Փաստորեն «Իմ քայլը» առաջ է անցել Հայաստանի Հանրապետական կուսակցությունից (ՀՀԿ), որը մշտադիտարկման նախորդ՝ երկրորդ փուլում (2018թ. նոյեմբերի 9-25) առաջինն էր քաղաքական ուժերի մեջ: Սա տեղի է ունեցել հիմնականում այն պատճառով, որ «Իմ քայլի» քարոզարշավին անմիջականորեն ներգրավվել է վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, մինչդեռ նախորդ փուլում Փաշինյանի՝ որպես կառավարության ղեկավարի լուսաբանումը մշտադիտարկման խմբի կողմից չի հաշվարկվել նրա գլխավորած նախընտրական դաշինքի օգտին: «Իմ

քայլը» առաջին տեղում է հայտնվել հետազոտված բոլոր ութ ՁԼՄ-ներում, այդ թվում «Կենտրոնի» և «Երկիր Մեդիայի» եթերում, որտեղ նախորդ՝ երկրորդ փուլում առավել ինտենսիվ լուսաբանվել են, համապատասխանաբար, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ) և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ):

ՀՀԿ-ն հետազոտված ՁԼՄ-ների մեծ մասում երկրորդն է եղել և՛ անդրադարձների հաճախությամբ, և՛ հատկացված եթերաժամանակի ծավալով: Անսպասելի բացառություն է դարձել ՀՀ-ը, որտեղ ՀՀԿ-ն՝ իրեն հատկացված եթերաժամանակով զիջել է իր բոլոր տասը մրցակիցներին:

Ընդհանուր առմամբ հեռուստաալիքներում 11 կուսակցությունների/դաշինքների լուսաբանումը կարելի է բնութագրել որպես հավասարակշռված, և անդրադարձների հաճախության և լուսաբանման ծավալի տարբերությունները պայմանավորված են եղել գլխավորապես քաղաքական ուժերի՝ ակտիվ ընտրարշավ վարելու հնարավորություններով և ձգտումով: Ի տարբերություն մշտադիտարկման նախորդ՝ երկրորդ փուլի, ընտրարշավի մասնակիցներին լուսաբանման ինտենսիվությամբ հնարավոր չէ բաժանել պայմանական խմբերի: Ընդ որում, առավել հավասարակշռված է եղել Հ1-ի լուսաբանումը, մասնավորապես, քաղաքական ուժերին բանավեճերին և «հյուր տաղավարում» ձևաչափի հաղորդումներին մասնակցելու համար հավասար հնարավորություններ տրամադրելու հաշվին: Հետազոտված մասնավոր հեռուստաալիքներից ամենամեծ հավասարակշռությունը ապահովել է ՀՀ-ը: Իսկ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նկատմամբ ուշադրության ամենամեծ տարբերությունը արձանագրվել է «Երկիր Մեդիա» և «Արմենիա» հեռուստաալիքներում:

ՀՀ օրենսդրությունը առցանց ՁԼՄ-ների համար չի ենթադրում ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին հավասար պայմաններ տրամադրելու պարտավորություն, այդ պատճառով էլ տվյալ մշտադիտարկման շրջանակներում հետազոտված News.am-ի և 1in.am-ի առջև դրված չի եղել հավասարակշռված լուսաբանման խնդիր, և նրանք կենտրոնացած են եղել «Իմ քայլի» և ՀՀԿ-ի դիմակայության վրա: Ընդ որում, 1in.am-ը նշանակալի ուշադրություն է հատկացրել «Լուսավոր Հայաստան» կուսակցությանը, որը ոչ միայն երրորդն է եղել անդրադարձների քանակով, այլ նաև, ի դեմս իր ներկայացուցիչների, ակտիվ ներկա է եղել բանավեճային ձևաչափերում: Համապատասխան հաղորդումների 80 հյուրերից 18-ը հենց այս կուսակցության ներկայացուցիչներն են եղել (ավելի շատ եղել են միայն «Իմ քայլից»՝ 29):

Անդրադարձների հաճախության հանրագումարով, հեռարձակողների ամենաքիչ լուսաբանմանն արժանացել է «Ազգային առաջընթաց» կուսակցությունը: Այն նաև հետազոտված վեց հեռուստաալիքներից 4-ում իրեն հատկացված եթերաժամանակով վերջինն է եղել և անդրադարձների հաճախությամբ News.am-ում «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցության հետ կիսել է վերջին տեղը: 1in.am-ի բանավեճային հաղորդումներում «Ազգային առաջընթաց» կուսակցությունը ոչ մի անգամ նույնիսկ չի հիշատակվել:

ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՆՇԱՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԹԻՎԸ, ինչպես մշտադիտարկման նախորդ՝ երկրորդ փուլում, ունեցել են «Իմ քայլը» և ՀՀԿ-ն: Ընդ որում,

ՀՀԿ-ի դեպքում դրանք կազմել են հետազոտված վեց հեռուստատալիքներում անդրադարձների ընդհանուր քանակի 38.9%-ը (միայն մեկ դրական և 81 բացասական), 58.1%՝ 1in.am-ում և 29.3%՝ News.am-ում:

Հետազոտված հեռուստատալիքներում «նշանային բնութագրիչների գործակիցը» հանրագումարով կազմել է 12.7%: Սա էականորեն գերազանցում է 2017թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում նույն ցուցանիշը՝ 6.8%, ինչը վկայում է «թեժ» ընտրական քարոզարշավի մասին: Տվյալ հանգամանքն ընդգծվում է դրական անդրադարձների նկատմամբ բացասականների գրեթե 7 անգամ գերազանցությամբ: Առցանց ՁԼՄ-ներում «նշանային բնութագրիչների գործակիցն» ավելի բարձր է եղել. 24.4%՝ 1in.am-ում և 16.8%՝ News.am-ում: News.am-ի դեպքում արձանագրվել է քաղաքական ուժերից մեկին՝ «Իմ քայլին» նշանային բնութագրիչներով անդրադարձների ամենաանբարենպաստ հաշվեկշիռը՝ 2 դրական և 118 բացասական:

Իշխող քաղաքական ուժի ընդգծված բացասական լուսաբանումն այս ընտրական քարոզարշավի առանձնահատկություններից մեկն է եղել: Հետազոտված ութ ՁԼՄ-ներից յոթում (ՀՀԿ-ի դեպքում՝ բոլոր ութում) «Իմ քայլն» ունի նշանային բնութագրիչներով անդրադարձների բացասական հաշվեկշիռ, բացառությամբ՝ 1in.am-ում (4 դրական և 3 բացասական):

Հետազոտված բոլոր հեռարձակողների մոտ ԲՀԿ-ի նշանային բնութագրիչներով անդրադարձների դրական հաշվեկշիռը պայմանավորված է եղել «Կենտրոնում» այս կուսակցության բացառապես դրական լուսաբանմամբ: ԲՀԿ-ին դրական բոլոր 8 անդրադարձները հենց այս հեռուստատալիքի եթերում են եղել, իսկ բոլոր 7 բացասականները՝ մյուս հեռուստատալիքների: Նմանատիպ պատկեր է արձանագրվել ՀՅԴ-ի պարագայում, որը բոլոր 5 դրական անդրադարձները ստացել է «Երկիր Մեդիայում», իսկ բոլոր 6 բացասական անդրադարձները արձանագրվել են մյուս հեռուստատալիքներում: Այս կուսակցություններին անդրադարձների բացասական հաշվեկշիռ է արձանագրվել նաև հետազոտված առցանց ՁԼՄ-ներում:

«Իմ քայլը» դաշինքի նկատմամբ բացասական վերաբերմունքը պաշտոնական նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում ձևավորվել է ընդդիմախոսների, ճնշող մեծամասնությամբ՝ ՀՀԿ-ի կողմից բարձրաձայնվող հաճախ կրկնվող թեմաների որոշակի շրջանակի հաշվին: Ինչպես, օրինակ, վարչական ռեսուրսի օգտագործումը «Իմ քայլի» օգտին, տնտեսության ոլորտում նոր իշխանության քաղաքականությունը, որը հանգեցրել է մի շարք ցուցանիշների վատթարացմանը, այդ թվում՝ նաև ներդրումների ծավալների անկմանը, ՀԱՊԿ-ի հետ կապված խնդիրները, Արցախի հարցում փոխզիջումների գնալու՝ նոր իշխանությունների ենթադրյալ պատրաստակամությունը: Ինչպես «Իմ քայլի», այնպես էլ այլ քաղաքական ուժերի դեպքում, իրենց հասցեին կտրուկ քննադատության նշանակալի բաժինը նրանք ստացել են սոցիալական ցանցերում և հեռուստատեսությունում զանազան կարգի բանավեճերի ընթացքում: Այնուհետև սոցցանցերի այդ գրառումների և հեռուստաբանավեճերի բովանդակությունը տարածվում էր ինչպես տեսանյութով, այնպես էլ՝ տեքստային տարբերակով: Մասնավորապես, News.am-ը ոչ միայն տեսատարբերակով վերահեռարձակել է միմյանց նկատմամբ բանավեճերի մասնակիցների բացասական վերաբերմունքը, այլ նաև դրանց բովանդակությունը բաժանել է բազմաթիվ փոքր նյութերի, հաճախ դրանց ավելացնելով նշանային բնութագրիչներով վերնագրեր՝ այդ

ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2018

կերպ մեծացնելով համապատասխան անդրադարձների քանակը: Բացի դրանից, նախընտրական քարոզչության վերջին օրը այս առցանց ռեսուրսը ցուցադրել է 2008թ. մարտի 1-ի հետաքննության մասին վավերագրական ֆիլմ, որում, մասնավորապես, Նիկոլ Փաշինյանը ի ցույց է դրվում ծայրահեղ բացասական լույսի ներքո:

Նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում ՀՀԿ-ի լուսաբանումը բացասական համատեքստում կենտրոնացել էր այն ժամանակների վրա, երբ այդ կուսակցությունը իշխանություն ուներ, իսկ ընտրություններին մասնակցող որոշ քաղաքական ուժեր արտահայտվում էին 2008թ. մարտի 1-ից հետո կոալիցիա կազմած բոլոր կուսակցություններին քաղաքական գործընթացներից, այդ թվում՝ ընտրությունները, դուրս թողնելու օգտին: ՀՀԿ-ի հասցեին քննադատություն հնչում էր բազմաթիվ աղբյուրներից՝ ներառյալ մյուս բոլոր քաղաքական ուժերի և հանրության լայն շրջանակների ներկայացուցիչները (նախորդ իշխանությունների օրոք երկիրը թալանելու, 2008թ. մարտի 1-ի ողբերգության, ռևանշիզմի և այլն):

Ի տարբերություն «Իմ քայլի» (ինչպես նաև՝ ՀՀԿ-ի), 2018թ. դեկտեմբերի 9-ի ընտրությունների արդյունքում ՀՀ ԱԺ անցած մյուս երկու կուսակցությունները (ԲՀԿ և «Լուսավոր Հայաստան») ավելի հազվադեպ են դարձել նպատակաուղղված քննադատության առարկա: Առանձին բացասական անդրադարձներն այդ կուսակցություններին սիստեմատիկ բնույթ չեն ունեցել: Իսկ ԲՀԿ-ի դեպքում դրականը ձևավորվել է «Կենտրոնի» եթերում նախընտրական միջացոռումներից նրան գովաբանող ռեպորտաժների հաշվին: Մինչդեռ «Լուսավոր Հայաստանի» լուսաբանումն իրականացվել է գլխավորապես չեզոք տոնով:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Երկրորդ փուլ. 2018թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-25)

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՆ ընդգրկել է տասնյոթ օր, որոնք նախորդել են 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածին՝ քաղաքական ուժերի կողմից ընտրություններին մասնակցելու մտադրության մասին հայտարարությունների ակտիվ տարածման սկզբից մինչև ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից համապատասխանաբար կուսակցությունների և դաշինքների գրանցումը: Նախընտրական մշտադիտարկման այս փուլը նվիրված է եղել ընտրություններին նախապատրաստվող քաղաքական ուժերի նկատմամբ ՉԼՄ-ների ուշադրության և վերաբերմունքի վերհանմանը: Ընդ որում, որպես հետազոտությունում ներառված լրացուցիչ կատեգորիա շարունակել է մնալ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի և ՀՀ կառավարության գործունեության լուսաբանումը, որը որոշակիորեն փոխկապակցված էր քաղաքական ուժերի, մասնավորապես «Իմ քայլը» դաշինքի լուսաբանման հետ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՅԻՆ ԱՌԱՎԵԼ ԻՆՏԵՆՍԻՎՈՐԵՆ, ինչպես և առաջին փուլում (2018թ. 16 հոկտեմբերի - 1 նոյեմբերի), հետազոտված հեռարձակողներից անդրադարձել է Հ1-ը (այդ ինտենսիվությունը նշանակալիորեն պայմանավորված էր կառավարության գործունեության պաշտոնական կողմին նվիրված նյութերի մեծ քանակով): Մյուսներից առավել հազվադեպ, ինչպես և առաջին փուլում էր, «Շանթ» հեռուստաալիքը: Ընդ որում, այս ցուցանիշի տարբերությունները հետազոտված հեռուստաալիքներում այնքան էական չեն, ինչպես նախորդ նախընտրական քարոզարշավների ժամանակ է եղել: Մշտադիտարկման թեմատիկայի լուսաբանման ինտենսիվության բարձր ցուցանիշը News.am-ի և համեմատաբար ցածր ցուցանիշը՝ 1in.am-ի պարագաներում պայմանավորված է եղել ոչ թե համապատասխան հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրության տարբերությամբ, այլ՝ այս առցանց ՉԼՄ-ների հետազոտված նյութերի ընդհանուր ծավալով:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՎԵՑ ՀԵՌՈՒՍՏԱՍԼԻՔՆԵՐԻ հանրագումարային ցուցանիշների համաձայն, անդրադարձների բոլոր օբյեկտներից ամենամեծ ուշադրությանն արժանացել են վարչապետի պաշտոնակատարը և կառավարությունը: Նույն դիտարկումը կարելի է կատարել առանձին վերցրած յուրաքանչյուր հեռուստաալիքի, ինչպես նաև News.am-ի համար: Միայն 1in.am-ում է լուսաբանման ինտենսիվությամբ առաջին տեղում եղել Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ): Բոլոր քաղաքական ուժերից ՀՀԿ-ն ամենաշատ ուշադրությանն արժանացել է թե՛ հեռուստատեսությամբ՝ հանրագումարով, թե՛ առցանց ՉԼՄ-ներում: Ամենաքիչը հեռուստատեսությամբ լուսաբանվել են «Ազգային առաջընթաց» կուսակցությունը, «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցությունը: «Ազգային առաջընթացը» նույն

ցուցանիշով վերջին տեղում է եղել առցանց լրատվամիջոցներում: ՀՀԿ-ն լուսաբանման ինտենսիվությամբ մյուս քաղաքական ուժերին առաջատարի իր դիրքերը զիջել է մշտադիտարկման առարկա դարձած ութ ՁԼՄ-ներից միայն երկուսում. «Կենտրոն» հեռուստաալիքում հանրապետականներից առաջ է անցել Բարգավաճ Հայաստան կուսակցությունը (ԲՀԿ), իսկ «Երկիր Մեդիայում»՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ):

Ընտրությունների մասնակցող 9 կուսակցությունները և 2 դաշինքները, հետագոտված ՁԼՄ-ների անդրադարձների հանրագումարային հաճախությամբ կարելի է բաժանել երեք պայմանական խմբի: Առաջին խմբում, ՀՀԿ-ից բացի, կարելի է ներառել նաև «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքը, ԲՀԿ-ին և ՀՅԴ-ին: (Ընդ որում, անդրադարձների հաճախությամբ «Իմ քայլը» երկրորդ տեղը հարկ է դիտարկել այն վերապահումով, որ վարչապետի պաշտոնակատարի և կառավարության գործունեության լուսաբանումը որոշակի ազդեցություն է ունեցել լսարանի կողմից՝ դե-ֆակտո կառավարող քաղաքական ուժի ընկալման վրա): Երկրորդ խմբում են «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը, «Մենք» կուսակցությունների դաշինքը, «Սասնա ծռեր» համահայկական կուսակցությունը և «Օրինաց երկիր» կուսակցությունը (ՕԵԿ): Երրորդ խմբում են «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ», «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական և «Ազգային առաջընթաց» կուսակցությունները:

Քաղաքական ուժերի նկատմամբ ուշադրության ամենափոքր տարբերությունը հետագոտված վեց հեռարձակողներից արձանագրվել է «Արմենիա» հեռուստաալիքում, իսկ ամենամեծը՝ «Կենտրոնում»: Առցանց ՁԼՄ-ներում արձանագրվել է ավելի մեծ տարբերություն, քան հեռուստատեսություն: Նման պատկերը բացատրելի է, քանի որ քաղաքական ուժերի հավասարակշռված լուսաբանման պարտավորությունը, որը օրենսդրությամբ հեռուստաալիքներին վերապահված է քարոզարշավի սկզբին գուզահեռ, նրանց գործունեության վրա այսպես թե այնպես անդրադառնում է նաև մինչ այդ:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԲՈՂՈՐ ՀԵՌԱՐԶԱԿՈՂՆԵՐԻ հանրագումարային ցուցանիշների համաձայն, երկու քաղաքական ուժ՝ ՀՀԿ-ն և «Իմ քայլը» ունեն անդրադարձների նշանային բնութագրիչների (դրական և բացասական) ամենամեծ թիվը: Ընդ որում, ՀՀԿ-ի հաշվեկշիռը ծայրահեղ բացասական է (3-24), իսկ «Իմ քայլինը»՝ գրոյական (16-16): Հետաքրքիր է, որ հետագոտված ժամանակահատվածի առաջին տասն օրվա ընթացքում (2018թ. նոյեմբերի 9-18) վերջինի հաշվեկշիռը նույնպես բացասական է եղել, այնուհետև այն հավասարվեց: Սակայն հաշվի առնելով վարչապետի պաշտոնակատարի և կառավարության գործունեությանը նշանային բնութագրիչներով անդրադարձների ծայրահեղ բացասական հաշվեկշիռը (6-35), որն ազդում է, ինչպես նշվեց վերևում, լսարանի կողմից «Իմ քայլը» ընկալման վրա, այս երկու քաղաքական ուժերի հակասական լուսաբանման միտումը կարելի է համարել ամրագրված: «Իմ քայլը» ունի հեռուստատեսություն նշանային բնութագրիչներով անդրադարձների ամենամեծ տոկոսը (22.1%): Դաշինքի այդ ցուցանիշն ավելի բարձր է եղել News.am-ում (22.3%): ՀՀԿ-ի նույն ցուցանիշը (17.9%) News.am-ում միանգամայն համադրելի է «Իմ քայլի» ցուցանիշի հետ, մինչդեռ 1in.am-ում այս երկու քաղաքական ուժերի լուսաբանման բնույթը խիստ տարբեր է եղել. 16.7% նշանային բնութագրիչներով անդրադարձներ «Իմ քայլին», 58.6%՝ ՀՀԿ-ին: Սակայն այստեղ հարկ է նաև նշել 1in.am-ի հետագոտված նյութերի ժանրային առանձնահատկությունը (բանավիճային հաղորդումներ):

Հետազոտված բոլոր ութ ՁԼՄ-ներից վարչապետի պաշտոնակատարը և կառավարությունը արժանացել են նշանային բնութագրիչներով լուսաբանման գրոյական հաշվեկշիռի միայն Հ1-ում և 1in.am-ում, մնացած բոլորում այս կատեգորիայի հաշվեկշիռը բացասական է, ընդ որում ամենից ոչ նպաստավորը՝ News.am-ում (4-40):

Հ1-ի, «Շանթի» և «Արմենիայի» եթերում արձանագրվել է նշանային բնութագրիչներով անդրադարձների ամենավոքը տոկոսը: Հ1-ում նման անդրադարձների բացասական հաշվեկշիռը միայն ՀՀԿ-ի դեպքում է եղել (1-6), իսկ դրականը (ճիշտ է, նվազագույն՝ 1-0)՝ ԲՀԿ-ի: «Շանթի» եթերում վարչապետի պաշտոնակատարի և կառավարության, ճիշտ այնպես, ինչպես ՀՀԿ-ի դեպքում, հաշվեկշիռը բացասական է եղել (համապատասխանաբար՝ 0-1 և 0-2), իսկ «Իմ քայլի» պարագայում՝ դրական (4-3): «Արմենիայի» եթերում բացասական հաշվեկշիռ են ունեցել վարչապետի պաշտոնակատարը և կառավարությունը (0-7), ինչպես նաև ՀՀԿ-ն և «Իմ քայլը» դաշինքը (վերջին երկու դեպքում՝ նվազագույնը (համապատասխանաբար՝ 0-1 և 2-3): Չեզոք անդրադարձների ամենավոքը տոկոսը՝ 60.5%, արձանագրվել է 1in.am-ում (հարկ է կրկին նկատի ունենալ, որ այստեղ հետազոտվել են միայն ուղիղ եթեր գնացող բանավիճային հաղորդումները) և 87.9%՝ News.am-ում: Մինչդեռ բոլոր հեռարձակողների մոտ ընդհանուր առմամբ 90.9% է, ինչն, այդուհանդերձ, ավելի ցածր ցուցանիշ է, քան 2017թ. խորհրդարանական ընտրությունների պաշտոնական քարոզարշավին նախորդած ժամանակահատվածում: Դա վկայում է քաղաքական առավել սուր պայքարի մասին, որում առաջին հերթին առանձնանում են ՀՀԿ-ն և «Իմ քայլը»: Հենց այս քաղաքական ուժերը, ինչպես նաև վարչապետի պաշտոնակատարը և կառավարությունը (պայմանականորեն՝ նոր իշխանությունը), ՁԼՄ-ների նյութերում ամենավառ արտահայտված գնահատողական անդրադարձների են արժանանում: Եթե, ինչպես վերևում է նշվել, «նոր իշխանությունը» նշանային բնութագրիչներով անդրադարձների բացասական հաշվեկշիռ ունի հետազոտված ութ ՁԼՄ-ներից վեցում, ապա ՀՀԿ-ի դեպքում արձանագրվել է մեկ բացառություն (գրոյական հաշվեկշիռ Հ2-ում): «Իմ քայլը» հետազոտվող ժամանակահատվածի առաջին տասն օրվա (նոյեմբերի 9-18) համեմատությամբ էականորեն բարելավվել է իր ցուցանիշը. հետազոտված ութ ՁԼՄ-ներից երեքում նրա մոտ արձանագրվել է դրական հաշվեկշիռ, իսկ երկուսում՝ գրոյական:

Ընդհանուր առմամբ, չեզոք է եղել պայմանական երրորդ խմբի քաղաքական ուժերի լուսաբանումը, որոնք հետազոտված ՁԼՄ-ներում ամենաքիչ ուշադրությանն էին արժանացել:

Հեռուստաեթերում նշանային բնութագրիչներով անդրադարձների դրական հաշվեկշիռ ՀՅԴ-ն և ԲՀԿ-ն ամբողջությամբ կամ հիմնականում ապահովել են, համապատասխանաբար, «Երկիր Մեդիայի» և «Կենտրոնի» հաշվին: Առաջինի դեպքում նշանային բնութագրիչներով (դրական) բոլոր 10 անդրադարձները ՀՅԴ-ին արձանագրվել են հենց «Երկիր Մեդիայի» եթերում: Իսկ երկրորդի դեպքում բոլոր հեռարձակողների հանրագումարային 12 դրական և մեկ բացասական՝ ԲՀԿ-ին անդրադարձներից 8 դրականը (0 բացասականի դեպքում), բաժին են ընկել «Կենտրոնին»: Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել, որ պահպանվում է նախորդ քարոզարշավների միտումը, երբ նշված երկու հեռուստաալիքները ցուցադրում են ակնհայտ կուսակցական կողմնորոշում:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ դիպվածային բնույթ է կրել և համապատասխան կատեգորիան «պլյուսները» ստացել է գլխավորապես վերջին ամիսներին քաղաքական գործընթացներում վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի դերի բարձր գնահատականի հաշվին: Բացասականը եղել է չկատարված խոստումների, ՀԱՊԿ-ի հետ կապված խնդիրների, անվտանգության և Արցախի հարցերում մարտահրավերների, ինչպես նաև Նիկոլ Փաշինյանի մի շարք արտահայտությունների կապակցությամբ, մասնավորապես այն մասին, որ 350 հազար ՀՀ բնակիչ իր աշխատանքով և վճարած հարկերով ապահովում են այն 800 հազարի գոյությունը, որոնք երկրի տնտեսության մեջ ներդրում չունեն: «Իմ քայլը» արժանացել է դրական լուսաբանման հանրության շրջանում բարձր վարկանիշ ունենալու համար և ընդդիմախոսների քննադատությանը (ինչպես քաղաքական, առաջին հերթին՝ ՀՀԿ-ի կողմից, այնպես էլ փորձագիտական հանրույթը ներկայացնող), որոնցում գերակշռել են էքսպրեսիվ արտահայտություններ, հանդիմանություն՝ կառավարության գործունեության և նախընտրական շրջանում դիրքորոշումների բևեռացման հետ կապված: ՀՀԿ-ն, ինչպես նաև՝ ԲՀԿ-ն և ՀՅԴ-ն, դրական գնահատական է ստացել հենց կուսակցության անդամների կողմից (փորձի և պրոֆեսիոնալիզմի համար), մինչդեռ նրա հասցեին քննադատություն հնչել է բազմաթիվ աղբյուրներից՝ ներառյալ այլ քաղաքական ուժերի և հանրության լայն շրջանակների ներկայացուցիչների (նախկին իշխանությունների օրոք կատարված թալանի, 2008թ. մարտի 1-ի ողբերգության, ռևանշիզմի համար և այլն):

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Առաջին փուլ. 2018թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16 - ՆՈՅԵՄԲԵՐԻ 1)

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՏՎՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

պայմանավորված է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի ամսաթվով (2018թ., հոկտեմբերի 16), որը փաստորեն անխուսափելի դարձրեց խորհրդարանական արտահերթ ընտրությունների անցկացումը դեկտեմբերին, և այն ամսաթվով, երբ այդ ընտրությունները պաշտոնապես նշանակվեցին (2018թ., նոյեմբերի 1): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրում վերջին ամիսների փոփոխությունները քաղաքական ուժերի դասավորվածության մեջ էական անորոշություններ մտցրին, նախընտրական մշտադիտարկման առաջին փուլը նվիրված է եղել ոչ թե հայաստանյան մի շարք առաջատար ԶԼՄ-ների կողմից կուսակցությունների և դաշինքների լուսաբանմանը, այլ՝ առավել հրատապ քաղաքական մի խնդրի՝ նոր կառավարության և դրա ղեկավարի գործունեության ու նախաձեռնությունների, այդ թվում 2018թ. դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու և կառավարության կողմից ՀՀ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագծի ընդունման հավանականության նկատմամբ ուշադրության և վերաբերմունքի վերհանմանը: Մշտադիտարկման թեմատիկայի մասին հասցեական և կառուցվածքային պատկերացում տալու համար անդրադարձների հեղինակները/աղբյուրները, ինչպես նաև՝ այդ անդրադարձների օբյեկտները բաժանվել են մի քանի կատեգորիաների:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՀԵՌԱՐԶԱԿՈՂՆԵՐԻՑ մշտադիտարկման թեմատիկային առավել ինտենսիվ է անդրադարձել Հ1-ը (ընդ որում Հ1-ի լուսաբանման զգալի մասը կազմել են պաշտոնական բնույթի նյութերը): Մյուսներից առավել հազվադեպ՝ «Շանթ» հեռուստաալիքը: Միննույն ժամանակ պետք է նշել, որ հետազոտված բոլոր հեռուստաալիքները այս թեմատիկային մեծ ուշադրություն են հատկացրել: News.am-ի բարձր և 1in.am-ի համեմատաբար ցածր ցուցանիշները պայմանավորված են եղել ոչ թե համապատասխան հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրության տարբերությամբ, այլ՝ այս առցանց ԶԼՄ-ների հետազոտված նյութերի ընդհանուր ծավալով:

Հետազոտված վեց հեռուստաալիքների հանրագումարային ցուցանիշների համաձայն, անդրադարձների բոլոր օբյեկտներից ամենամեծ ուշադրությանն արժանացել են վարչապետը և ընդհանուր առմամբ կառավարությունը: Նույն դիտարկումը կարելի է կատարել առանձին վերցրած յուրաքանչյուր հեռուստաալիքի համար: Առաջատար այս կատեգորիային հաջորդում են արտահերթ ընտրությունները/Ընտրական օրենսգրքում փոփոխությունների նախագիծը և առանձին նախարարությունները/գերատեսչությունները: Մոտավորապես նմանատիպ պատկեր է արձանագրվել News.am-ի նյութերում, մինչդեռ 1in.am-ի բանավիճային հաղորդումներում առաջատարը

արտահերթ ընտրությունների և Ընտրական օրենսգրքում փոփոխությունների նախագծի թեման է:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ/ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻՑ մշտադիտարկման թեմատիկային առավել ակտիվ անդրադարձներով աչքի են ընկել կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները: Հենց նրանց արտահայտություններն են եղել առավել պահանջված հետազոտված հեռուստաալիքների և News.am-ի կողմից: Միայն 1in.am-ն է էականորեն առավել հաճախ անդրադարձել փորձագիտական հանրության ներկայացուցիչներին, ինչը բացատրվում է տվյալ լրատվամիջոցի այն նյութերի առանձնահատկությամբ, որոնք դարձել են սույն հետազոտության առարկան: Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ հետազոտված ՁԼՄ-ները հայաստանյան հանրության զանազան շերտերի կարծիքների լայն սպեկտր են ներկայացրել՝ պաշտոնական անձինք, հիմնական քաղաքական ուժեր, փորձագետներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Ընդ որում, օտարերկրյա աղբյուրները/հեղինակները, այդ թվում՝ Սփյուռքի ներկայացուցիչները, զգալիորեն քիչ են պահանջված եղել: Սա որոշակիորեն կարելի է բացատրել այն հանգամանքով, որ վերջին ամիսներին հասարակությունը կենտրոնացած է եղել իր ներքին փոխհարաբերությունների և ինքնագնահատականի վրա:

ԹԵՄԱՏԻԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻՆ անդրադարձների հեղինակների/աղբյուրների վերաբերմունքի կապակցությամբ կարելի է նշել, որ հեռուստաթերթում հնչած նշանային բնութագրիչներով արտահայտությունների ամենամեծ տոկոսը բաժին է ընկել արտահերթ ընտրություններին և Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագծին (հետազոտված վեց հեռուստաալիքներում նշանային բնութագրիչներով անդրադարձների ընդհանուր քանակի 51.1%): Ընդ որում նախագծին և արտահերթ ընտրություններին դրական վերաբերմունք արտահայտվել է բացասականից էականորեն առավել հաճախ (218՝ 68-ի դիմաց): Անդրադարձների հեղինակների/աղբյուրների 18 կատեգորիաներից տվյալ թեմային անդրադարձների բացասական հաշվեկշիռ արձանագրվել է Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ), Դաշնակցության (ՀՅԴ) և փորձագիտական հանրության մոտ: Սակայն, եթե ՀՀԿ-ի մոտ գերակշռել է բացասական վերաբերմունքը (6 դրական 37 բացասականի դիմաց), ապա ՀՅԴ-ի պարագայում դիտարկվել է մոտավոր հավասարություն (18՝ 20-ի դիմաց): Հեղինակների/աղբյուրների ևս հինգ կատեգորիաներ կամ չեն անդրադարձել թեմային, կամ գրոյական հաշվեկշիռ են ունեցել: Իսկ ամենամեծ աջակցությունը հետազոտվող ՁԼՄ-ներում Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագիծը և արտահերթ ընտրությունները ստացել են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության/«Ծառուկյան» դաշինքի կողմից: Այդ իմաստով համանման ցուցանիշներ ունեն «Ելք» դաշինքը և կառավարության ներկայացուցիչները:

Համեմատաբար հակասական է եղել հեռուստաալիքների կողմից վարչապետի և ընդհանուր առմամբ կառավարության լուսաբանումը (տվյալ կատեգորիային անդրադարձների ընդհանուր քանակի մոտավորապես 25% նշանային բնութագրիչներով անդրադարձներ, այդ թվում՝ 115 դրական և 61 բացասական): Արտահայտությունների բացասական հաշվեկշիռ է արձանագրվել հեղինակների/աղբյուրների հինգ կատեգորիաների մոտ (առավել ծայրահեղ է եղել ՀՀԿ-ի և փորձագիտական հանրության ներկայացուցիչների վերաբերմունքը կառավարության գործունեության նկատմամբ): Եվս հինգ հեղինակներ/աղբյուրներ

կատեգորիաներ հետազոտված հեռուստաթերում թեմային չեն անդրադարձել կամ ցուցաբերել են զրոյական հաշվեկշիռ:

Ինչ վերաբերում է հետազոտված առանձին ՁԼՄ-ներին, ապա ընդհանուրից տարբերվող միտում է արձանագրվել News.am-ի և «Երկիր Մեդիա» հեռուստաալիքի պարագաներում: Դրանցում վարչապետի և կառավարության նկատմամբ նշանային բնութագրիչներով անդրադարձների հաշվեկշիռը բացասական է եղել: Ընդ որում, «Երկիր Մեդիայում» նման հաշվեկշիռն առաջացել է հենց լրագրողների քննադատական արտահայտությունների հաշվին (14 բացասական անդրադարձներից 7-ը): Որոշ ՁԼՄ-ներում անդրադարձների նշանային բնութագրիչների բացասական հաշվեկշիռը արձանագրվել է առանձին նախարարությունների/ գերատեսչությունների և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության/«Իմ քայլը» և «Ելք» դաշինքների նկատմամբ: Սակայն այս դեպքերում նշանային բնութագրիչներն այնքան էլ սկնհայտ չեն եղել, ինչպես վերևում հիշատակված երկու ՁԼՄ-ների դեպքում: 1in.am-ը հետազոտված ՁԼՄ-ներից միակն է եղել, որի դեպքում փորձագիտական հանրության մոտ արձանագրվել է վարչապետի և ընդհանուր առմամբ կառավարության նկատմամբ նշանային բնութագրիչներով անդրադարձների դրական հաշվեկշիռ, մինչդեռ Հ1-ի, «Արմենիայի» և «Շանթի» պարագաներում այդ հաշվեկշիռը զրոյական է եղել, մյուս չորսի մոտ՝ բացասական (News.am, Հ2, «Երկիր Մեդիա» և «Կենտրոն»):

ԱՍՓՈՓԵԼՈՎ ԲՈԼՈՐ ԹԵՄԱՏԻԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ՝ կարելի է նշել, որ դրական անդրադարձները արձանագրվել են հիմնականում այն նյութերում, որոնք նվիրված են եղել կամ վերաբերել են Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագծի/արտահերթ ընտրությունների, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովի, համաներման և լայն համատեքստում՝ Հայաստանում իրականացված «թավշյա» հեղափոխության թեմաներին: Վերջինի մասին հետազոտված ժամանակահատվածում մասնավորապես արտահայտվել են օտարերկրյա գործիչները և Սփյուռքի ներկայացուցիչները (Լիբանանի նախագահ Միշել Աուն, ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոն, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա): Ընդ որում, Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագիծը/արտահերթ ընտրությունները և համաներումը հաճախ դարձել են նաև բացասական անդրադարձների առիթ: Քննադատության համար ևս մեկ հաճախակի առիթ է եղել նոր իշխանությունների կադրային քաղաքականությունը, գլխավորապես, ՀՀ ոստիկանության պետի նախկին տեղակալ Հունան Պողոսյանի նշանակումը Սյունիքի մարզպետ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՁԼՄ-ներում 2018թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումն իրականացրել է Երևանի մամուլի ակումբը «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացնում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ:

Մշտադիտարկումն անցկացվել է չորս փուլով.

- **առաջին փուլ**՝ 2018թ. հոկտեմբերի 16 - նոյեմբերի 1 (ընտրությունների անցկացման մասին հայտարարության նախաշեմ),
- **երկրորդ փուլ**՝ 2018թ. նոյեմբերի 9-25 (նախընտրական շրջան),
- **երրորդ փուլ**՝ 2018թ. նոյեմբերի 26 - դեկտեմբերի 7 (նախընտրական քարոզչության ժամանակահատված),
- **չորրորդ փուլ**՝ 2018թ. դեկտեմբերի 9 (20.00 մինչև 02.00) - դեկտեմբերի 10-15 (հետընտրական գործընթացներ):

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԷՒՆ ստացված քանակական և որակական տվյալների վերլուծության միջոցով պարզել և սահմանել.

- 2018թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների նկատմամբ Հայաստանի ՁԼՄ-ների ուշադրության աստիճանը,
- արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման, ՀՀ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընդունման, ՀՀ կառավարության գործունեության մասին ամենատարբեր դիրքորոշումների ներկայացման հավասարակշռվածության աստիճանը,
- որքան ազատ և անկողմնակալ են ՁԼՄ-ները ընտրազանգվածին տեղեկություններ տրամադրել համապետական ընտրական ցուցակներով ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների/դաշինքների մասին, ապահովել վերջինների մուտքը եթեր՝ իրենց հայացքների, կարծիքների արտահայտման համար՝ դրանով իսկ նպաստելով ընտրողների կողմից ինքնուրույն և գիտակցված ընտրության կատարմանը,
- որքանով են լրատվամիջոցները հետևել նախընտրական քարոզարշավի լուսաբանումը կարգավորող օրենսդրության դրույթներին,

- որքան ակտիվ են ՁԼՄ-ները անդրադարձել հետընտրական իրավիճակին և արտացոլել ընտրական գործընթացի գնահատականների ներկայանակը:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են հետազոտման քանակական և որակա-քանակական մեթոդները: Քանակական մեթոդները ներառում էին հեռուստատեսային և առցանց բովանդակության միավորների և ծավալների զուտ թվաբանական հաշվարկները: Որակա-քանակական մեթոդները հիմնվում էին բովանդակության այն միավորների հաշվարկի վրա, որոնք մշտադիտարկման թիմի կողմից որոշակի վերլուծության են ենթարկվել:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ԸՆԴԳՐԿԵԼ Է 6 հեռարձակող և 2 առցանց ՁԼՄ:

- *համազգային վերգետնյա հեռուստաալիքներ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2) և «Շանթ»,*
- *համացանցային ՁԼՄ-ներ՝ 1in.am (<https://www.1in.am>) և News.am (<https://news.am>):*

Վերոնշյալ հեռուստաալիքներում հետազոտման են ենթարկվել երեկոյան պրայմ-թայմին (18.00-00.00) հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական հաղորդումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Մշտադիտարկման չեն ենթարկվել նախընտրական քարոզչության, առևտրային/սոցիալական գովազդի/հայտարարությունների ներծրագրային բլոկները, ինչպես նաև՝ վազող տողը:

1in.am-ում հետազոտվել են 1inTV-ի հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները, որոնք տեղադրվել են YouTube-ի խոդովակի վրա և հեռարձակվել են երեկոյան պրայմ-թայմի ուղիղ եթերում (18.00-00.00):

News.am-ում հետազոտվել են արխիվացված (նախորդ օրվա) բոլոր նյութերը, *բացառությամբ* առևտրային/քաղաքական/սոցիալական գովազդի և հայտարարությունների, «մաքուր» լուսանկարների (հրապարակումներից դուրս և առանց վերնագրերի, տեքստերի):

Մշտադիտարկման առարկա են դարձել.

- *առաջին փուլում* (ընտրությունների անցկացման մասին հայտարարության նախաշեմին՝ 2018թ. հոկտեմբերի 16 - նոյեմբերի 1)՝ բոլոր այն նյութերը, որոնցում կային անդրադարձներ 2018թ. դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման հնարավորությանը, կառավարության ներկայացրած ՀՀ Ընտրական օրենսգրքի նախագծին և ՀՀ նոր կառավարության գործունեությանը,
- *երկրորդ փուլում* (նախընտրական շրջան՝ 2018թ. նոյեմբերի 9-25)՝ բոլոր այն նյութերը, որոնցում անդրադարձ կար 2018թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների հավանական/գրանցված մասնակիցներին, ինչպես նաև ՀՀ կառավարության գործունեությանը,

ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2018

- **էրրորդ փուլ** (նախընտրական քարոզչության ժամանակահատված՝ 2018թ. նոյեմբերի 26 - դեկտեմբերի 7)՝ բոլոր այն նյութերը, որոնցում կային անդրադարձներ 2018թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին,
- **չորրորդ փուլ** (հետընտրական գործընթացներ՝ 2018թ. դեկտեմբերի 9 (20.00 մինչև 02.00) - դեկտեմբերի 10-15)՝ բոլոր այն նյութերը, որոնցում անդրադարձ կար 2018թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների արդյունքներին, այդ ընտրություններին հայաստանյան հասարակության և միջազգային հանրության տարբեր խմբերի կողմից տրված գնահատականներին և ընդհանուր առմամբ հետընտրական գործընթացներին:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստա-** և **առցանց նյութն** էր:

Հեռուստանյութ ասելով հասկանում ենք.

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

- լրատվական ծրագրի առանձին սյուժեն,
- հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,
- հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ (միջարկում, բլյում և այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,
- սյուժեների ներծրագրային ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում են,
- հեռուստասյուժեին (ռեպորտաժին և այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրև այդ սյուժեի (ռեպորտաժի և այլն) մաս:

Ընդամին.

- **Լրատվական/լրատվական-վերլուծական ծրագրերը** բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ,

- **Հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները** դիտարկվել են հետևյալ կերպ.

1. Եթե հաղորդումը նվիրված էր առանձին թեմայի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,

2. Եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր

ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

II. Մշտադիտարկողներն օրական արձանագրում էին հետազոտվող եթերի սևագրությունը՝ 18.00-00.00-ին հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական հաղորդումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **18.00**-ին, չեն դիտարկվել, մշտադիտարկումն սկսվել է տվյալ հաղորդման ավարտից հետո: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **00.00**-ին, դիտարկվել են ամբողջությամբ, մինչև դրանց ավարտը:

Մշտադիտարկման *չեն ենթարկվել*.

- նախընտրական քարոզչության բլոկները,
- առևտրային/սոցիալական գովազդը/հայտարարությունները,
- վազող տողը:

Առցանց նյութ ասելով հասկանում ենք.

Տեքստի՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

- առանձին հոդվածը, ակնարկը, հարցազրույցը և այլն,
- հրապարակումների ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում են,
- վերնագիրը/ենթավերնագիրը, լիդը (այսինքն վերնագրից/ենթավերնագրից հետո եղած տեքստը, որը նախորդում է հրապարակմանը և որում բերվում է հոդվածի հիմնական միտքը) դիտարկվել են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում են,
- այս կամ այն հրապարակման վերաբերյալ խմբագրական մեկնաբանությունը, որն առանձնացված էր «խմբագրության կողմից», «խմբագրության մեկնաբանություն» և այլ արտահայտություններով, դիտարկվել են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում են,
- լուսանկարը (նկարները, ծաղրանկարները, շարժերը, կոլաժները, նկարազարդումները, գրաֆիկան և այլն), որը հրապարակման մաս չի կազմել, սակայն միննույն ժամանակ վերնագիր կամ տեքստ է պարունակել, կամ իմաստային ծանրաբեռնվածություն ուներ, դիտարկվել է իբրև առանձին նյութ: Եթե լուսանկարը կից է եղել հրապարակմանը, ապա այն դիտարկվել է իբրև այն նյութի մաս, որին վերաբերում է,
- եթե տեքստային նյութին կից է եղել տեսա- կամ ձայնագրություն, ապա այն դիտարկվել է իբրև մեկ միասնական մուլտիմեդիոն հրապարակում,

- Եթե տեսա- կամ ձայնագրությունը հրապարակման մաս չի կազմել, այլ եղել է ինքնուրույն նյութ (վերնագրով, տեքստով և այլն), ապա նմանատիպ նյութը դիտարկվել է իբրև առանձին մուլտիմեդիոն հրապարակում:

III. Մշտադիտարկման ընթացքում *պարզվել* և *արձանագրվել են*.

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՇԵՄ

2018թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16 - ՆՈՅԵՄԲԵՐԻ 1

1. Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը, որոնք պարունակել են անդրադարձներ 2018թ. դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման հնարավորությանը և ՀՀ նոր կառավարության գործունեությանը:

2. Մշտադիտարկման թեմային անդրադարձների քանակը նյութերում

Պարզվել և արձանագրվել է 2018թ. դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման հնարավորությանը և ՀՀ նոր կառավարության գործունեությանը անդրադարձների քանակը:

Կազմվել է անդրադարձների հեղինակների՝ սուբյեկտների, ինչպես նաև այդ անդրադարձների օբյեկտների ցուցակը:

ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

| | |
|-----|---|
| 1. | ՀՀ կառավարության, նախագահի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ |
| 2. | ՀՀ արդարադատության մարմինների ներկայացուցիչներ |
| 3. | ՀՀ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժեր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ) «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ) «Ելք» դաշինք Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ) |
| 4. | ՀՀ ԱԺ անկախ պատգամավորներ |
| 5. | Արտախորհրդարանական քաղաքական ուժերի ներկայացուցիչներ/անկուսակցական քաղաքական գործիչներ |
| 6. | Փորձագետներ/ՀԿ-ների/ԲՀԿ-ների ներկայացուցիչներ |
| 7. | ԶԼՄ-ներ/լրագրողներ |
| 8. | Հայտնի հասարակական գործիչներ |
| 9. | Արցախի պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ |
| 10. | Արցախի հանրության ներկայացուցիչներ |

| | |
|-----|--|
| 11. | Սփյուռքի ներկայացուցիչներ |
| 12. | Օտարերկրյա պաշտոնական անձինք |
| 13. | Օտարերկրյա հանրության ներկայացուցիչներ |
| 14. | Շարքային քաղաքացիներ/Vox populi |
| 15. | Այլ |

ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

| | |
|----|--|
| 1. | Վարչապետ Նիկոլ Փաշինյան և ընդհանուր առմամբ Հայաստանի կառավարություն |
| 2. | Կառավարության անդամներ, նրանց ղեկավարած նախարարությունները/ գերատեսչությունները |
| 3. | «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, «Իմ քայլը» կուսակցությունների դաշինք, «Ելք» դաշինք |
| 4. | 2018թ. դեկտեմբերի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններ և կառավարության ներկայացրած Ընտրական օրենսգրքի նախագիծը (2018թ. հոկտեմբերի 22-ից)* |

* ՀՀ Ընտրական օրենսգրքի նախագիծը անդրադարձների օբյեկտ է դարձել 2018թ. հոկտեմբերի 22-ից, երբ ՀՀ կառավարությունն այն ներկայացրեց Ազգային Ժողովի քննարկմանը:

Այստեղ և այսուհետ գործել է հետևյալ սկզբունքը. միևնույն նյութում միևնույն հեղինակի անդրադարձը (բնորոշիչ նշանը) միևնույն օբյեկտին արձանագրվել է մեկ անգամ, անկախ այն բանից, թե այն քանի անգամ է կրկնվել նյութում: Եթե նյութում միևնույն հեղինակը տարբեր օբյեկտների է անդրադարձել, ապա դրանցից յուրաքանչյուրը արձանագրվել է (կրկին մեկական անգամ) համապատասխան սյունակում: Եթե նյութում կային մի քանի հեղինակների անդրադարձները մեկ կամ մի քանի օբյեկտների, ապա դրանք բոլորը (ինչպես նաև բնորոշիչ նշանը) արձանագրվել են համապատասխան սյունակներում:

3. Անդրադարձների բնորոշիչ նշանը դրանց հեղինակների կողմից

Պարզվել և արձանագրվել է նյութում առկա՝ անդրադարձի հեղինակի վերաբերմունքը օբյեկտի նկատմամբ.

- դրական (+)
- բացասական (-)
- չեզոք (0)

Ընդ որում, այստեղ նույնպես գործել է 2-րդ կետում նկարագրված սկզբունքը:

Մշտադիտարկողի բոլոր կասկածները բնորոշիչ նշանի անորոշության կապակցությամբ մեկնաբանվում էին հօգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Վերը նշված բոլոր կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր *միավորներով*:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2018թ. ՆՈՅՄԲԵՐԻ 9-25

1. Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը, որոնք պարունակել են անդրադարձներ 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների հավանական/գրանցված մասնակիցներին, ինչպես նաև ՀՀ կառավարության գործունեությանը:

2. Մշտադիտարկման թեմային անդրադարձների քանակը և ձևը նյութերում

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը և ձևը, որոնք պարունակել են անդրադարձներ արտահերթ խորհրդարանական ընտրությունների հավանական/գրանցված մասնակիցներին, ինչպես նաև ՀՀ կառավարության գործունեությանը:

Կազմվել է մշտադիտարկման օբյեկտների ցուցակը*:

| | |
|-----|---|
| 1. | Վարչապետ Նիկոլ Փաշինյան և Հայաստանի կառավարություն |
| 2. | «Ազգային առաջընթաց» կուսակցություն (2018թ. նոյեմբերի 14-ից)** |
| 3. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն |
| 4. | «Իմ քայլը» կուսակցությունների դաշինք |
| 5. | «Լուսավոր Հայաստան» կուսակցություն |
| 6. | Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցություն |
| 7. | Հայաստանի Հանրապետական կուսակցություն |
| 8. | «Մենք» կուսակցությունների դաշինք |
| 9. | «Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն |
| 10. | «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն |
| 11. | «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն |
| 12. | «Օրինաց երկիր» կուսակցություն |

* Կուսակցությունների/դաշինքների ցանկը տրվում է հայերեն այբբենական կարգով:

** Տվյալ կուսակցությունը մշտադիտարկման օբյեկտ է դարձել ՀՀ ԿԸՀ՝ խորհրդարանական ընտրություններին մասնակցության գրանցման հայտ ներկայացնելու պահից:

Անդրադարձների ձևը տարբերակվել է հետևյալ կերպ.

Ա. Մշտադիտարկման օբյեկտին ամբողջությամբ նվիրված նյութ

Նյութը համարվում էր մշտադիտարկման օբյեկտին՝ X-ին ամբողջությամբ նվիրված, եթե անգամ նրանում կար անդրադարձ մեկ այլ օբյեկտի՝ Y-ին, կամ էլ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի (թեմաների), բայց այդ անդրադարձը **ածանցյալ** բնույթ ուներ: Ընդ որում, եթե նման նյութում կար անդրադարձ (ածանցյալ բնույթի) մեկ այլ օբյեկտի՝ Y կամ Z, ապա օբյեկտը նույնպես նշվում էր համապատասխան սյունակում՝ կախված նրան անդրադարձի ձևից (մասնակի կամ հիշատակում):

Բ. Մշտադիտարկման օբյեկտին **մասնակի** նվիրված նյութ.

Նյութը համարվում էր մշտադիտարկման օբյեկտին՝ X-ին մասնակի նվիրված, եթե նրանում **հավասարապես** կար անդրադարձ մեկ այլ օբյեկտի՝ Y-ին կամ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի (թեմաների): Ընդամին, եթե նման նյութում հավասարապես առկա էին անդրադարձներ մշտադիտարկման երկու և ավելի օբյեկտի, ապա այդ օբյեկտներից յուրաքանչյուրը նշվում էր «մասնակի» սյունակում:

Գ. Նյութ, որում առկա էր մշտադիտարկման օբյեկտների **հիշատակում**.

Հիշատակում էին համարվում այն դեպքերը, երբ նյութում մշտադիտարկման օբյեկտները պարզապես անվանվում էին, բայց նրանց մասին լրացուցիչ տեղեկություն, բնութագրություն չէր տրվում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաև այն նյութերը, որոնցում արձարձվել է արտասահմանյան այն կուսակցության գործունեությունը, որն ընդհանուր ծագում և պատմություն ունի մշտադիտարկման օբյեկտ հանդիսացած համանուն կուսակցության հետ, բայց միևնույն ժամանակ ոչինչ չի ասվել հայաստանյան համանուն կուսակցության հետ արտասահմանյան այդ կուսակցության կապի մասին:

Կուսակցության/դաշինքի այն ներկայացուցչի հանդես գալը նյութում, որը պաշտոնատար անձ է, կամ կատարում է ոչ կուսակցական մասնագիտական պարտականություններ, դիտարկվել է որպես անդրադարձ այդ կուսակցությանը/դաշինքին միայն այն դեպքում, երբ նյութում որևէ կերպ ընդգծվել է վերջինիս պատկանելությունը տվյալ կուսակցությանը/դաշինքին: Հետևաբար, նման անդրադարձը հետազոտվել է վերոթվարկյալ և ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ձևն ու բնույթը):

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր մշտադիտարկման օբյեկտին միայն մեկ անդրադարձ և դրա միայն մեկ ձև:

3. Մշտադիտարկման օբյեկտին անդրադարձների բնույթը նյութերում

Պարզվել և արձանագրվել է նյութում մշտադիտարկման օբյեկտին անդրադարձների բնույթը՝ **դրական (+), բացասական (-) կամ չեզոք (0):**

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին նյութերում առկա այն անդրադարձները, որոնք լսարանի մոտ մշտադիտարկման օբյեկտի մասին միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն էին թողնում: Եթե նման միանշանակություն չկար, անդրադարձն արձանագրվում էր որպես չեզոք: Մշտադիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հոգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Բացի այդ, եթե նյութում հաղորդվում էր այն մասին, որ որևէ անձ/կազմակերպություն հրապարակայնորեն հայտարարել է ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրություններում այս կամ այն կուսակցությանը/դաշինքին սատարելու/չսատարելու

մասին, ապա վերջինիս անդրադարձն արձանագրվում էր որպես համապատասխանաբար դրական/բացասական:

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր մշտադիտարկման յուրաքանչյուր օբյեկտի միայն մեկ բնորոշիչ նշան (+, - կամ 0):

Վերը նշված բոլոր կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր *միավորներով*:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

2018թ. ՆՈՅՄԲԵՐԻ 26 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7

1. Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը, որոնք պարունակել են անդրադարձներ 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին համապետական ընտրական ցուցակներով մասնակցող կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին:

2. Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների քանակը և ձևը նյութերում

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը և ձևը, որոնք պարունակել են անդրադարձներ 2018թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին:

Ընդ որում, կուսակցության/դաշինքի ղեկավարներ ասելիս հասկանում ենք.

- համապետական ընտրական ցուցակներում առաջին երեք տեղերն զբաղեցրած անձանց:

Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների ձևը տարբերակվել է հետևյալ կերպ.

Ա. կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին *ամբողջությամբ* նվիրված նյութ.

Նյութը համարվում էր X կուսակցությանը/դաշինքին ամբողջությամբ նվիրված, եթե անգամ նրանում կար անդրադարձ մեկ այլ Y կուսակցությանը/դաշինքին, կամ էլ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի (թեմաների), բայց այդ անդրադարձը *ածանցյալ* բնույթ ուներ: Ընդ որում, եթե նման նյութում կար անդրադարձ (ածանցյալ բնույթի) մեկ այլ Y կամ Z կուսակցության/դաշինքի, ապա տվյալ կուսակցությունը/դաշինքը նույնպես նշվում էր համապատասխան սյունակում՝ կախված նրան անդրադարձի ձևից (մասնակի կամ հիշատակում):

Բ. կուսակցությանը/դաշինքին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին *մասնակի*

նվիրված նյութ.

Նյութը համարվում էր X կուսակցությանը/դաշինքին մասնակի նվիրված, եթե նրանում **հավասարապես** կար անդրադարձ մեկ այլ՝ Y կուսակցության/դաշինքի կամ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների: Ընդամին, եթե նման նյութում հավասարապես առկա էին անդրադարձներ երկու և ավելի կուսակցությունների/դաշինքների, ապա այդ կուսակցություններից/դաշինքներից յուրաքանչյուրը նշվում էր «մասնակի» սյունակում:

Գ. նյութ, որում **հիշատակվում** էին կուսակցությունները/դաշինքները/նրանց ղեկավարները.

Հիշատակում էին համարվում այն դեպքերը, երբ նյութում կուսակցությունը /դաշինքը/նրա ղեկավարները պարզապես անվանվում էին, բայց նրանց մասին լրացուցիչ տեղեկություն, բնութագրություն չէր տրվում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաև կուսակցության/դաշինքի/նրա ղեկավարների (**համապետական ընտրական ցուցակի առաջին երեք դեմքերը**) երևալը հեռուստատեսային, տեսա-կամ ֆոտո կադրում: Եթե կադրում երևալը այն նյութի մաս էր կազմում, որն արդեն իսկ պարունակում էր ամբողջությամբ կամ մասնակի անդրադարձ տվյալ կուսակցությանը/դաշինքին/նրա ղեկավարներին, ապա որպես լրացուցիչ հիշատակում այն չի արձանագրվել: Եթե կուսակցությունների/դաշինքների/նրանց ղեկավարների՝ կադրում երևալը տեղի է ունեցել այնպիսի նյութում, որում նրանց անդրադարձ չի եղել, ապա այն դիտարկվել է որպես առանձին հիշատակում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաև այն նյութերը, որոնցում արծարծվել է արտասահմանյան այն կուսակցության գործունեությունը, որն ընդհանուր ծագում և պատմություն ունի դիտարկման առարկա հանդիսացած համանուն կուսակցության հետ, բայց միևնույն ժամանակ ոչինչ չի ասվել հայաստանյան համանուն կուսակցության հետ արտասահմանյան այդ կուսակցության կապի մասին:

Կուսակցության/դաշինքի ղեկավարների (ընտրական ցուցակում առաջին երեք տեղերը զբաղեցնող) ցանկացած երևալը նյութում դիտարկվել է որպես անդրադարձ այդ կուսակցությանը/դաշինքին՝ անկախ նրանից, թե ինչ դերում են այդ անձինք հանդես եկել (նույնիսկ եթե նրանք նյութում ներկայացվել են որպես իրենց ոչ կուսակցական պաշտոնական կամ մասնագիտական պարտականությունները կատարող): Հետևաբար, նման անդրադարձը հետազոտվել է վերոթվարկյալ և ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ձևն ու բնույթը, հեռուստանյութերի դեպքում՝ նաև եթերաժամանակը):

Կուսակցության/դաշինքի այլ ներկայացուցիչների դեպքում անդրադարձը (դրա ձևը, բնույթը և եթերաժամանակը) արձանագրվում էր միայն այն դեպքում, երբ նրանց՝ կուսակցությանը/դաշինքին պատկանելությունը նյութում որևէ կերպ ընդգծվում էր:

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր կուսակցության/դաշինքի/նրա ղեկավարների/ներկայացուցիչների միայն մեկ անդրադարձ և դրա միայն մեկ ձև:

3. Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների բնույթը նյութերում

Պարզվել և համապատասխան սյունակում արձանագրվել են նյութում կուսակցության/դաշինքի/նրա ղեկավարների/ներկայացուցիչների անդրադարձների բնույթը՝ *դրական (+), բացասական (-) կամ չեզոք (0)*:

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին նյութերում առկա այն անդրադարձները, որոնք լսարանի մոտ կուսակցության/դաշինքի կամ նրա ղեկավարների/ներկայացուցիչների մասին միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն էին թողնում: Եթե նման միանշանակություն չկար, անդրադարձն արձանագրվում էր որպես չեզոք: Մշտադիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հոգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Բացի այդ, եթե նյութում հաղորդվում էր այն մասին, որ որևէ անձ/կազմակերպություն հրապարակայնորեն հայտարարել է ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրություններում այս կամ այն կուսակցությանը/դաշինքին սատարելու/չսատարելու մասին, ապա վերջինիս անդրադարձն արձանագրվում էր որպես համապատասխանաբար դրական/բացասական:

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի/նրա ղեկավարների/ներկայացուցիչների միայն մեկ բնորոշիչ նշան (+, - կամ 0):

Վերը նշված բոլոր կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր *միավորներով*:

4. Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված հեռուստանյութերի եթերաժամանակը

Նախընտրական քարոզարշավի ժամանակ մշտադիտարկման առարկա դարձած հեռուստաալիքներում հետազոտվել է նաև խմբագրական լուսաբանման մեջ կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը:

Եթե նյութն ամբողջությամբ կամ մասնակի էր նվիրված կուսակցությանը/դաշինքին, ապա պարզվել և արձանագրվել է այն *եթերաժամանակը*, որը տրամադրվել է կուսակցությանը/դաշինքին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաև այլ անձանց՝ նրանց մասին իրենց դատողություններն ու պատմությունները ներկայացնելու համար:

Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրանց մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված եթերաժամանակի չափումն իրականացվում էր հետևյալ սկզբունքով.

1) եթե հեռուստանյութն ամբողջությամբ նվիրված էր այս կամ այն կուսակցությանը/դաշինքին, ապա դրա ողջ եթերաժամանակը վերագրվել է տվյալ

կուսակցությանը/դաշինքին,

2) եթե կուսակցությանը/դաշինքին նվիրվում էր հեռուստանյութի միայն մի մասը, ապա տվյալ կուսակցությանը/դաշինքին է վերագրվել եթերաժամանակի միայն այն մասը, որը նվիրված էր նրան,

3) եթե X կուսակցությանը/դաշինքին նվիրված հեռուստանյութում բերվում էին մեկ այլ՝ (X կուսակցությունից/դաշինքից տարբեր) Y կուսակցության/դաշինքի արտահայտությունները կամ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին (*առանց X-ի հետ համեմատության*), ապա Y-ին է վերագրվել նյութի այդ մասի համապատասխան եթերաժամանակը,

4) եթե X կուսակցությանը/դաշինքին նվիրված հեռուստանյութում ներկայացվում էին X-ի արտահայտությունները մեկ այլ՝ Y կուսակցության/դաշինքի մասին կամ՝ Y-ի արտահայտությունները X-ի մասին կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին՝ *X-ի համեմատությամբ*, ապա այդ նյութի եթերաժամանակի *համապատասխան հատվածի 50-ական տոկոսը* մշտադիտարկողները վերագրել են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվել է *վայրկյաններով*:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԴԱՇԻՆՔՆԵՐ

Մշտադիտարկման օրյեկտ են դարձել 9 կուսակցություն և 2 դաշինք, որոնք ՀՀ ԿԸՀ-ում գրանցվել են 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին համապետական ընտրական ցուցակներով մասնակցելու համար:

ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ*

| | |
|----|---|
| 1. | «Ազգային առաջընթաց» կուսակցություն. Լուսինե Հարոյան, Սամվել Մելիքյան, Արամ Մանուկյան |
| 2. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն. Գագիկ Ծառուկյան, Միքայել Մելքումյան, Արթուր Գրիգորյան |
| 3. | «Իմ քայլը» կուսակցությունների դաշինք. Նիկոլ Փաշինյան, Արարատ Միրզոյան, Լենա Նազարյան |
| 4. | «Լուսավոր Հայաստան» կուսակցություն. Էդմոն Մարուքյան, Մանե Թանդիլյան, Արման Բաբաջանյան |
| 5. | Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցություն. Արմեն Ռուստամյան, Արսեն Համբարձումյան, Արթուր Խաչատրյան |
| 6. | Հայաստանի Հանրապետական կուսակցություն. Վիգեն Սարգսյան, Արփինե Հովհաննիսյան, Դավիթ Շահնազարյան |
| 7. | «Մենք» կուսակցությունների դաշինք. Արամ Սարգսյան, Խաչատուր Քոքոբեյլյան, Անժելա Խաչատրյան |

| | |
|------------|---|
| 8. | «Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն. Վարուժան Ավետիսյան, Ստեփան Գրիգորյան, Գարեգին Չուգասզյան |
| 9. | «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն. Սուրեն Սահակյան, Արտակ Կիրակոսյան, Ռուզաննա Տոռոզյան |
| 10. | «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն. Լևոն Շիրինյան, Մարիամ Մանուկյան, Գևորգ Հովսեփյան |
| 11. | «Օրինաց երկիր» կուսակցություն. Արթուր Բաղդասարյան, Մհեր Շահգեղյան, Հեղինե Բիշարյան |

** Կուսակցությունների/դաշինքների ցանկը տրվում է հայերեն այբբենական կարգով:*

ԶՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

2018թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9 (20.00 մինչև 02.00), ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-15

1. Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը, որոնք պարունակել են անդրադարձներ 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներին, այդ ընտրություններին հայաստանյան հասարակության և միջազգային հանրության տարբեր խմբերի կողմից տրված գնահատականներին և ընդհանուր առմամբ հետընտրական գործընթացներին:

Ընդ որում, 2018թ. դեկտեմբերի 9-ին, ժամը 20.00-ից (քվեարկության ավարտից) մինչև 02.00 հետազոտության առարկա են դարձել հետազոտված հեռուստաալիքների ամբողջ եթերը և առցանց ԶԼՄ-ների բոլոր նյութերը, որոնք Համացանց են տեղադրվել նշված ժամանակահատվածում: Հետագա օրերին (2018թ. դեկտեմբերի 10-15), ինչպես և նախկինում, վեց հեռուստաալիքներում հետազոտվել են երեկոյան պրայմ-թայմին (18.00-00.00) հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական ծրագրերը և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները, 1in.am-ում՝ պրայմ-թայմի (18.00-00.00) բանավիճային հաղորդումները, News.am-ում՝ բոլոր արխիվացված (նախորդ օրվա) նյութերը:

2. Հեղինակների կողմից ընտրություններին/հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը նյութերում

Պարզվել և արձանագրվել է ընտրություններին/հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը:

Կազմվել է անդրադարձների հեղինակների ցուցակը:

ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

| | |
|-----------|---|
| 1. | Պետական պաշտոնական մարմիններ |
| 2. | Իշխող քաղաքական ուժ («Իմ քայլը» նախընտրական դաշինք և դրան մաս կազմող «Քաղաքացիական պայմանագիր» և «Առաքելություն» կուսակցություններ) |

| | |
|----|---|
| 3. | Քաղաքական ընդդիմություն |
| 4. | Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ |
| 5. | Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր |
| 6. | Քաղաքացիական հասարակություն/ Փորձագիտական հանրություն |
| 7. | Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/Էքզիթ փոլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ |
| 8. | ԶԼՄ-ներ/լրագրողներ/սոցցանցեր |
| 9. | Այլ |

Այստեղ և այսուհետ գործել է հետևյալ սկզբունքը. միևնույն նյութում միևնույն հեղինակի անդրադարձը (բնորոշիչ նշանը) մշտադիտարկման թեմային արձանագրվել է մեկ անգամ, անկախ այն բանից, թե այն քանի անգամ է կրկնվել նյութում: Եթե նյութում կային մի քանի հեղինակների անդրադարձերը մշտադիտարկման թեմային, ապա դրանք բոլորը (ինչպես նաև բնորոշիչ նշանը) արձանագրվել են համապատասխան սյունակներում:

3. Նյութերում անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների /հետընտրական գործընթացների գնահատականը

Պարզվել և արձանագրվել է նյութում առկա՝ անդրադարձի հեղինակի վերաբերմունքը ընտրություններին/հետընտրական գործընթացներին.

- դրական (+)
- բացասական (-)
- չեզոք (0)

Ընդ որում, այստեղ նույնպես գործել է 2-րդ կետում նկարագրված սկզբունքը:

Մշտադիտարկողի բոլոր կասկածները բնորոշիչ նշանի անորոշության կապակցությամբ մեկնաբանվել են հոգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Վերը նշված բոլոր կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր *միավորներով*:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ

ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ (Հ1) - 2001թ. հիմնադրված Հանրային հեռուստառադիոընկերության բաղկացուցիչ մասն է: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Լուրեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 21.00, հոկտեմբերի 21-ին և դեկտեմբերի 2-ին հետազոտվել է նաև «Լուրերի» կիրակնօրյա 21.00-ի թողարկումը), «Օրակարգ» լրատվական-վերլուծական հաղորդումը կիրակի օրերին՝ 21.00 (մշտադիտարկման ընթացքում եթեր է հեռարձակվել 4 անգամ՝ հոկտեմբերի 28 և նոյեմբերի 11, 18, 25), «Խորհրդարան» լրատվական ծրագիրը (մշտադիտարկման ընթացքում եթեր է հեռարձակվել 1 անգամ - նոյեմբերի 14-ին, 23.45);
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները - «Այսօր իրականում» (հինգշաբթի օրերին, նոյեմբերի 19-ից՝ երկուշաբթի - ուրբաթ, նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 13-ը՝ ամեն օր, բացառությամբ դեկտեմբերի 5-ի՝ կուսակցությունների ցուցակների առաջին դեմքերի մասնակցությամբ նախընտրական բանավեճի անցկացման օրվա), «Խաղի կանոններ» (ուրբաթ օրերին), «Նախընտրական բանավեճ» (նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 6-ը՝ ամեն օր),
- դեկտեմբերի 9-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

«ԱՐՄԵՆԻԱ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Ժամ» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-կիրակի՝ 20.00),
- «Ժամ» հաղորդման հիմնական թողարկման շրջանակներում նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 6-ը հեռարձակվող «հյուր տաղավարում» ձևաչափի հաղորդումը,
- դեկտեմբերի 9-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

«ԵՐԿԻՐ ՄԵՂԻԱ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Երկիրն այսօր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 22.30, նոյեմբերի 22-ին հեռուստամարաթոնի ուղիղ հեռարձակման կապակցությամբ հետազոտվել է ժամը 20.30-ի թողարկումը, դեկտեմբերի 2-ին հետազոտվել է նաև «Երկիրն այսօրի» կիրակնօրյա թողարկումը՝ 22.30), «Երկրի շաբաթը» լրատվական-վերլուծական ծրագիրը (կիրակի օրերին՝ 19.50, մշտադիտարկման ընթացքում եթեր է հեռարձակվել 1 անգամ՝ հոկտեմբերի 28-ին),
- «Երկիրն այսօրի» շրջանակներում նոյեմբերի 26-ից հեռարձակվող «հյուր տաղավարում» ձևաչափի հաղորդումը (երեկոյան 20.30-ի թողարկումից հետո),
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները - «Երկրի հարցը» (երկուշաբթի-ուրբաթ), «Դարաշրջան» (շաբաթ օրերին), «Հարցեր դաշնակցականներին» (նոյեմբերի 12-25, երկուշաբթի - կիրակի, բացառությամբ նոյեմբերի 22-ի),
- դեկտեմբերի 9-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

«ԿԵՆՏՐՈՆ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Էպիկենտրոն» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-կիրակի՝ 21.30, նոյեմբերի 11-ից՝ երկուշաբթի-շաբաթ, նոյեմբերի 10-ին և դեկտեմբերի 15-ին, ֆուտբոլային խաղի ուղիղ հեռարձակման կապակցությամբ հետազոտվել է 19.30-ի թողարկումը, դեկտեմբերի 2-ին հետազոտվել է նաև «Էպիկենտրոնի» կիրակնօրյա թողարկումը՝ 19.30),
- «Էպիկենտրոնի» երեկոյան 19.30-ի և 21.30-ի թողարկումների շրջանակներում նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 5-ը հեռարձակվող «հյուր տաղավարում» ձևաչափի հաղորդումը,
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները - «Ուրվագիծ» (երկուշաբթի-հինգշաբթի, հեռարձակվել է մինչև նոյեմբերի 12-ը), «Հայկական ուրբաթ» (ուրբաթ օրերին, հեռարձակվել է մինչև նոյեմբերի 12-ը), «Հայելու առաջ» (շաբաթ-կիրակի, նոյեմբերի 12-ից՝ երկուշաբթի-կիրակի),
- դեկտեմբերի 9-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ (Հ2) - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 18 ժամ: Հետազոտության առարկա են եղել.

- «Լրաբեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 20.00),
- «Խոսքի իրավունք» «հյուր տաղավարում» ձևաչափի հաղորդումը (երկուշաբթի-ուրբաթ),
- դեկտեմբերի 9-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

«ՇԱՆԹ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1994թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Հորիզոն» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 22.00, հոկտեմբերի 25-ին և նոյեմբերի 29-ին, ֆուտբոլային խաղի ուղիղ հեռարձակման կապակցությամբ հետազոտվել է 18.00-ի թողարկումը),
- «Հորիզոնի» հիմնական թողարկման շրջանակներում հեռարձակվող «Հեռանկար» «հյուր տաղավարում» ձևաչափի հաղորդումը, դեկտեմբերի 2-ին հետազոտվել է նաև «Հեռանկարի» կիրակնօրյա հաղորդումը (նախընտրական բանավեճ),
- դեկտեմբերի 9-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

1in.am (<https://www.1in.am/>) - լրատվական առցանց ՁԼՄ: Հիմնադրվել է 2010թ.: Հետազոտման առարկա են դարձել.

- 1inTV-ի հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները, որոնք տեղադրվել են YouTube-ի խողովակի վրա և հեռարձակվել են երեկոյան պրայմ-թայմի ուղիղ եթերում (18.00-00.00),
- դեկտեմբերի 9-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել են նշված ժամանակահատվածում 1in.am-ում տեղադրված բոլոր նյութերը:

News.am (<https://news.am/arm/>) - լրատվական առցանց ՁԼՄ: Հիմնադրվել է 2009թ.: Հետազոտման առարկա են դարձել.

ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2018

- News.am-ի հայալեզու տարբերակի արխիվացված (նախորդ օրվա) բոլոր նյութերը, բացառությամբ գովազդից,
- դեկտեմբերի 9-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետագոտվել են նշված ժամանակահատվածում News.am-ում տեղադրված բոլոր նյութերը:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Չորրորդ փուլ. 2018թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9 (20.00-ից մինչև 02.00-ն), ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-15

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2), «Շանթ»

2018թ. դեկտեմբերի 9 (20.00-ից մինչև 02.00-ն), դեկտեմբերի 10-15

| Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր) | | | | | 431 |
|---|---|---|--|-----------|------------|
| | ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ | Հեղինակների կողմից ընտրությունների/հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր) | Անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների /հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր) | | |
| | | | + | - | 0 |
| 1. | Պետական պաշտոնական մարմիններ | 218 | 31 | 32 | 155 |
| 2. | Քաղաքական ընդդիմություն | 83 | 27 | 10 | 46 |
| 3. | Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ | 77 | 38 | 0 | 39 |
| 4. | ԶԼՄ-ներ/լրագրողներ/սցենարիստներ | 67 | 7 | 3 | 57 |
| 5. | Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն | 48 | 23 | 5 | 20 |
| 6. | Իշխող քաղաքական ուժը | 28 | 5 | 0 | 23 |
| 7. | Այլ | 25 | 1 | 0 | 24 |
| 8. | Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/Էքզիթ փոլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ | 20 | 9 | 0 | 11 |
| 9. | Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր | 17 | 4 | 9 | 4 |
| | Ընդամենը (միավոր) | 583 | 145 | 59 | 379 |

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1)

2018թ. դեկտեմբերի 9 (20.00-ից մինչև 02.00-ն), դեկտեմբերի 10-15

| Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր) | | | | | 119 |
|---|---|---|--|-----------|------------|
| | ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ | Հեղինակների կողմից ընտրություններին/ հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր) | Անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների /հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր) | | |
| | | | + | - | 0 |
| 1. | Պետական պաշտոնական մարմիններ | 68 | 7 | 11 | 50 |
| 2. | Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն | 29 | 15 | 0 | 14 |
| 3. | Քաղաքական ընդդիմություն | 15 | 8 | 2 | 5 |
| 4. | Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ | 15 | 7 | 0 | 8 |
| 5. | Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/էքզիթ փոլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ | 15 | 9 | 0 | 6 |
| 6. | ԶԼՄ-ներ/լրագրողներ/սցցանցեր | 14 | 5 | 2 | 7 |
| 7. | Այլ | 8 | 0 | 0 | 8 |
| 8. | Իշխող քաղաքական ուժը | 5 | 1 | 0 | 4 |
| 9. | Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր | 4 | 0 | 4 | 0 |
| | Ընդամենը (միավոր) | 173 | 52 | 19 | 102 |

«Արմենիա» հեռուստաալիք

2018թ. դեկտեմբերի 9 (20.00-ից մինչև 02.00-ն), դեկտեմբերի 10-15

| Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր) | | | | | 44 |
|---|--|---|--|----------|-----------|
| | ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ | Հեղինակների կողմից ընտրություններին/ հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր) | Անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների /հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր) | | |
| | | | + | - | 0 |
| 1. | Պետական պաշտոնական մարմիններ | 28 | 2 | 2 | 24 |
| 2. | Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ | 10 | 5 | 0 | 5 |
| 3. | Քաղաքական ընդդիմություն | 9 | 2 | 1 | 6 |
| 4. | ԶԼՄ-ներ/լրագրողներ/սցցանցեր | 6 | 0 | 1 | 5 |
| 5. | Իշխող քաղաքական ուժը | 5 | 0 | 0 | 5 |
| 6. | Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր | 2 | 0 | 2 | 0 |
| 7. | Այլ | 2 | 0 | 0 | 2 |
| 8. | Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն | 0 | 0 | 0 | 0 |
| 9. | Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/Էքզիթ փուլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը (միավոր) | 62 | 9 | 6 | 47 |

«Երկիր Մեդիա» հեռուստաալիք

2018թ. դեկտեմբերի 9 (20.00-ից մինչև 02.00-ն), դեկտեմբերի 10-15

| Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր) | | | | | 73 |
|---|--|---|--|-----------|-----------|
| | ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ | Հեղինակների կողմից ընտրություններին/ հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր) | Անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների /հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր) | | |
| | | | + | - | 0 |
| 1. | Պետական պաշտոնական մարմիններ | 35 | 3 | 6 | 26 |
| 2. | ԶԼՄ-ներ/լրագրողներ/սցցանցեր | 16 | 0 | 0 | 16 |
| 3. | Քաղաքական ընդդիմություն | 13 | 2 | 2 | 9 |
| 4. | Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ | 7 | 4 | 0 | 3 |
| 5. | Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն | 6 | 1 | 2 | 3 |
| 6. | Իշխող քաղաքական ուժը | 4 | 1 | 0 | 3 |
| 7. | Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/էքզիթ փուլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ | 4 | 0 | 0 | 4 |
| 8. | Այլ | 4 | 0 | 0 | 4 |
| 9. | Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր | 2 | 0 | 1 | 1 |
| | Ընդամենը (միավոր) | 91 | 11 | 11 | 69 |

«Կենտրոն» հեռուստաալիք

2018թ. դեկտեմբերի 9 (20.00-ից մինչև 02.00-ն), դեկտեմբերի 10-15

| Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր) | | | | | 65 |
|---|--|---|--|----------|-----------|
| | ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ | Հեղինակների կողմից ընտրություններին/ հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր) | Անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների /հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր) | | |
| | | | + | - | 0 |
| 1. | Պետական պաշտոնական մարմիններ | 28 | 8 | 4 | 16 |
| 2. | Քաղաքական ընդդիմություն | 19 | 7 | 1 | 11 |
| 3. | Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ | 17 | 10 | 0 | 7 |
| 4. | Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն | 7 | 4 | 2 | 1 |
| 5. | ԶԼՄ-ներ/լրագրողներ/սոցցանցեր | 6 | 0 | 0 | 6 |
| 6. | Այլ | 5 | 0 | 0 | 5 |
| 7. | Իշխող քաղաքական ուժը | 3 | 1 | 0 | 2 |
| 8. | Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր | 3 | 1 | 2 | 0 |
| 9. | Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/Էքզիթ փուլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ | 1 | 0 | 0 | 1 |
| | Ընդամենը (միավոր) | 89 | 31 | 9 | 49 |

Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2)

2018թ. դեկտեմբերի 9 (20.00-ից մինչև 02.00-ն), դեկտեմբերի 10-15

| Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր) | | | | | 55 |
